

Քիւ 27008
Սեպտեմբեր 24, 1980

Հոգեշնորհ
Տ. Արշէն Վրդ. Այվազեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Չէլթընիւմ.

Սիրելի Հայր Արշէն,

Առաջած ենք Սեպտեմբեր 18, 1980 թուակիր ձեր նամակը Մայքըլ
Բալուեանի եւ Քրիսթոֆերֆի ծրագրեալ ամուսնութեան մասին:

Նկատի առնելով յիշեալներու նախ-ամուսնական յարաբերութիւնը
եւ ստեղծուած կացութիւնը, որուն պատճառաւ Կաթոլիկ եկեղեցին
չէ հաւանած զանոնք պակել, եւ իրենց մտադրութիւնը՝ մեր Եկե-
ղեցւոյ մէջ Գաակի Խորհուրդը ընդունելէ յետոյ զաւակները Կաթո-
լիկ եկեղեցւոյ մէջ մկրտելու, զգակից ըլլալով հանդերձ իրենց
սազնապին՝ չենք կրնար արտօնել որ անոնց ամուսնութեան խորհուր-
դը կատարէք:

Նոյն առեւ սակայն զանոնք կը յանձնենք ձեր հովուական ինստի-
տիւտի որպէս զի հայրական ձեր թելադրութիւնները ընելով զիրենք
բաշխելու վերագտնելու իրենց քնականոն եւ աստուածահամոյ կեն-
ցաղը:

Սիրոյ ողջութիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳՈՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012 • (215) 379-2515

THE VERY REVEREND ARSHEN AIVAZIAN, PASTOR

Սեպտեմբեր 18, 1980

Գերաշնորհ Տ. Թորգոմ Արքեպս.
Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ
Հիւս. Ամերիկայի Արեւելեան Թեմին
Նիւ Եօրք


Գերաշնորհ Արքեպս. Հայր,
Եկեղեցւոյ ծխականներէն Տէր եւ Տիկ. Հայկ Բալուեանի զաւակը՝
Մայքըլ եւ իր խօսեցեալը՝ Թրինիտաս Մըրֆի դիմած են ինծի ամուսնութեան
խնդրանքով: Մայքըլ 19 տարեկան է եւ մկրտուած ու դրոշմուած է Հայց.
Եկեղեցւոյ մէջ, իսկ Թրինիտաս 20 տարեկան է եւ մկրտուած ու դրոշմուած
է Հռովմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ: Կը փափաքին ամուսնանալ տար-
ւոյս Հոկտեմբեր 18-ին եւ խնդրած են նաեւ եւ Կաթողիկէ Եկեղեցական մը
եւս ներկայ ըլլալ պսակի արարողութեան:

Բնական պայմաններու տակ նման խառն ամուսնութիւններ տեղի կ'ունե-
նան Հայց. Եկեղեցւոյ մէջ եւ մեր Թեմին մէջ, եթէ զոյգը ըրացնէ Հայց.
Եկեղեցւոյ պահանջած պայմանները: Սակայն այս պարագան տարբեր երեւոյթներ
կը ներկայացնէ եւ այս պատճառաւ ինքզինքիս չեմ արտօներ պսակը կատարել
առանց Արքեպսութեան դիտողութեան եւ արտօնութեան:

Հարցը հետեւեալն է. խօսեցեալը՝ Թրինիտաս՝ յղի է եւ այս իրողու-
թիւնը ինծի յայտնուած է խորհրդապահաբար զոյգին կողմէ: Հայց. Եկեղեց-
ւոյ մէջ ամուսնանալու իրենց փափաքը ինծի կը թուի թէ մղուած է գլխա-
ւորաբար այս իրողութենէն, քանի որ յայտնած են նաեւ որ որոշած են
իրենց զաւակը մկրտել եւ դրոշմել Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ: Ուրեմն
առակադրութիւնը մեր Եկեղեցւոյ մէջ կատարելէ ետք իրենց զաւակը կաթո-
ղիկէ Եկեղեցւոյ մէջ մկրտելը հակընթաց քայլեր են եւ կ'արտայայտեն
Եկեղեցւոյ Ս. Խորհուրդներու էական բնոյթի անգիտութիւնը զոյգին կողմէ:
Բայց նոյնքան եւ կարեւոր է նկատի ունենալ որ Մայքըլ եւ Թրինիտաս
որոշած են ամուսնանալ Թրինիտասի յղանակով ստեղծուած ստիպողական
պայմաններուն տակ, ինչ որ ինքնին հակառակ է մեր Եկեղեցւոյ կանոն-
ներուն:

Արքեպս. Հայր, նկատի ունենալով վերեւ յիշած պարագաները, կը
խորհիմ թէ այս ամուսնութիւնը պէտք չէ սրբադործուի Հայց. Եկեղեցւոյ
մէջ: Սակայն կը դիմեմ ձեզի ձեր քննարկողութեան եւ տնօրինողութեան
համար:

Մտածելով ի համբոյր Ս. Աշոյի,


Արշէն Արք. Այվազեան

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Քիւ 27770
Ապրիլ 21, 1982

Հոգեշնորհ
Տ. Արշէն Վրդ. Այվազեան
Հովիւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ
Չէլիքնեան.

Սիրելի Հայր Արշէն,

Աստուած ենք Մարտ 28, 1982 թուակիր ձեր նամակը, որով
մեզ կը հրաւիրէք օրհնելու Պատկը ժան Ալեքսանեանի եւ Սել-
մա Հաշհաշի, քնդառաջելով նշանուած գոյգին եւ անոնց ծնո-
րաց փախարին:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք այս հրաւերին
համար, ասկայն կը ցուինք որ պիտի չկարենանք անձնապէս ներ-
կայ գտնուիլ Ս. Պատկը խորհուրդին, որ տեղի պիտի ունենայ
Յունիս 27, 1982ին, արուած ըլլալով զայր թուականին քա-
ղաքէն բացակայ պիտի ըլլանք:

Համեցէք ձեր շնորհակալութիւնը եւ լաւագոյն բարեմաղթու-
թիւնները փոխանցել ժան Ալեքսանեանի եւ Սելմա Հաշհաշի, ինչ-
պէս նաեւ անոնց ծնողներուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆԳԻՍԱՌԳՈՍ
Առաջնորդ

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

.101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

• (215) 379-2515

THE VERY REVEREND ARSHEN AIVAZIAN, PASTOR

Մարտ 23, 1982

Գերաշնորհ Տ. Թորգոմ Արքեպս.
Առաջնորդ Հայոց Հիւսս. Ամերիկայի
Արեւելեան թեմին
Նիւ Եօրք, Ն.Ե.


Գերաշնորհ Սրբազան Հայր,


Ճան Աւեքսանեան, զաւակը Տէր եւ Տիկ. Մամատ Աւեք-
սանեանի եւ Սելմա Հաշհաշ, դուստրը Տէր եւ Տիկ. Օհաննէս
Հաշհաշի նշանուած են եւ կը ծրագրեն պսակուիլ մեր եկե-
ղեցւոյ մէջ Կիրակի, Յունիս 27, 1982-ին:

Նշանեալ զոյգը եւ իրենց ընտանիքները փափոք յայտ-
նած են որ դուք անձամբ օրհնէք պսակը եւ խնդրեցին ինձմէ
որպէսզի հրահրեմ ձեզ Ս. Պսակի խորհուրդին նախագահելու:
Այսու կը հրահրեմ Սրբազնութիւնդ անձամբ նախագահելու եւ
օրհնելու յիշեալ պսակադրութիւնը:

Եթէ դրական ըլլայ ձեր որոշումը այս խնդրով, ձեր
համբորդութեան մանրամասնութիւնները ըստ այնմ կը դասա-
ւորենք:

Ձերդ ի Բրիտան,


Արշէն Վրդ. Այվազեան





ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Փետրուար 23, 1989

Հոգեշնորհ

Տ. Հայկազուն Վրդ. Մելգոնեան

Հովի Ա. Երրորդութիւն Եկեղեցոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Ձեռքընձամբ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Մօտ երկու ամիս առաջ Առաջնորդ Սրբազան Հայրը զիս Ա. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ նշանակեց:

Սուրբ Վարդան Մայր Տաճարը հայկական կառուցուածքով ու ոճով շինուած, ինչպէս Թէքէեան կ'ըսէ. «Պարզ ու խորունկ, մութ ու լոյս» տաքուկ մթնոլորտով սրբավայր մըն է: Օտարներ երբ եկեղեցի կը մտնեն՝ հայկական ճարտարապետութեան ու մեր եկեղեցոյ հմայիչ մթնոլորտին վրայ կը հիանան: Ա. Վարդան Մայր Տաճարը սրբազան կոթող մըն է, որմով մենք ազգովին պէտք է հպարտ ըլլանք եւ անոր վրայ գուրգուրանք:

Անշուշտ Մայր տաճարի ճարտարապետութիւնն ու մթնոլորտը բաւարար չեն ըսելու համար որ Ա. Վարդան Մայր Տաճարը կատարեալ է: Սակայն կարելի է ըսել՝ նեկայանալի ու վայելուչ է: Բայց եւ այնպէս կրնայ աւելի լաւ, աւելի վայելուչ եւ աւելի ներկայանալի ըլլալ: Ինչպէս զիտէք բարեւաւումի համար սահման չկայ:

Աւելի վայելուչ դառնալու ազդակներէն մին է ծէսին հետ կապուած սպասներու կանոնաւորութիւնն ու ներդաշնակութիւնը:

Զանիցս ներկայ եղած եմ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած հանդիսաւոր թափօրներուն. միշտ թափօրներու համար մեր եկեղեցական եղբայրներէն խնդրուած է որ իրենց շուրջաւոները

հետերնին քերեն: Ծատեր զանազան պատճառներով չեն կրցած՝ քերել եւ ստիպուած անոնց տրամադրուած են Մայր Տաճարի շորջառները: Սակայն այդ շորջառները բաւարար չեն եղած: Ինքս Ա. Քաղաք Երուսաղէմ ուսանած ու ձեռնադրուած ըլլալով՝ ականատես եղած եմ թափօրներու ընթացքին միօրինակ եւ միաձեռն շորջառներու ներդաշնակ տեսքին: Ինչ որ Ա. Քաղաքի մէջ տեսած ես՝ կ'ուզեմ նաեւ Ա. Վարդան Մայր Տաճարին մէջ ի գործ դնել:

Որոշած եմ 30 հատ միաձեռն եւ միօրինակ շորջառներ կարել տալ Մայր Տաճարէն ներս տեղի ունեցող արարողութիւններու եւ թափօրներու ընթացքին գործածելու համար, որպէս զի թափօրները առաւել եւս վայելուչ ու ներկայանալի ըլլան:

Սոյն ծրագրի գործադրութեան համար մեր ժողովուրդի եւ ձեր եկեղեցոյ բարոյական ու նիւթական օժանդակութեան կարիքը ունիմ: Սոյն գրութեամբս պիտի խնդրէի որ ձեր եկեղեցին ստանձնէր շորջառ մը կարելու ծախսը՝ որ 350 (երեք հարիւր յիսուն) տոլար է: Վստահ եղէք որ ձեր նիւթական օժանդակութիւնը մեծապէս պիտի գնահատուի:

Ձեր արեւշատութեան ու յաջողութեան բարի մաղթանքներով,

Աղօթակից

Բարգէն Վրդ. Անուշեան
Լուսարարապետ Ա. Վարդան Մայր Տաճարի